

# ՊԱՏԵՐԱԳՄԸ ՄԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԷ



Իմ աշխարհով արդեն 29 օր է մեծ ողբերգություն է սրարշավում...  
 Նրա անունը պատերազմ է...  
 Պատերազմը մեր ընտրությունը չէ. այն մեզ պարտադրվել է... Այն դաժան է ու նախադեպը չունեցող. 5-րդ սերնդի պատերազմ է:  
 ... Հնձվում են հայրենիքի կանաչ արտերը, սերմերն ու սերմնացանները: Գերժամանակակից բալիստիկ հրթիռների թիրախ են դառնում գյուղեր ու քաղաքներ, դպրոցներ ու մանկապարտեզներ, հիվանդանոցներ ու բազմաբնակարան շենքեր:  
 ... Իմ Արցախ աշխարհով արդեն 29 օր է փոթորկում է պատերազմը, իսկ ես... Իսկ ես մնացել եմ սեպտեմբերում, այն տաք ու գեղատեսիլ օրերում, երբ առաջին անգամ այցելեցի Արցախ՝ Երկիր դրախտավայր: Ինչպես ասում են դա պետք է տեսնել, պատմելու բան չէ:

Ճանապարհը մեզ տարավ հրաշագեղ, կոկիկ ու նորաշունչ քաղաք Ստեփանակերտ: Արցախի մայրաքաղաքը մաքուր ու շքեղ...  
 Հետաքրքիր էին մարդիկ՝ զուսպ ու հպարտ, պայծառ մտքով, խելոք աչքերով: Հանրապետության հրապարակը ծրփում էր լույսերի մեջ: Նստեցինք ցայտաղբյուրների մոտ... մեր շուրջը փարթամ ծաղկամարզեր ու եզակի ծառատեսակների պուրակներ էին: Ճեմուղիներում հանգստանում էին մարդիկ, գրուցում օրվա թեմաներով:  
 ... Ես այդ օրն ինձ համար հայտնաբերեցի հերոսների քաղաք Ստեփանակերտ:  
 Ընդամենը մեկ ամիս առաջ այսպիսին էր իմ տեսած քաղաքը...

Ավա՛ղ, այսօր թշնամին հողին է հավասարել այս ծաղկող եզերքը:  
 Թշնամին չխնայեց նաև բերդաքաղաք Շուշին և նրա Ղազանեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Այն խոցվեց հոկտեմբերի 8-ին, երբ զինվորներն այնտեղ, մարտի գնալուց առաջ, աղոթում էին...  
 ... Ես կրկին մնացել եմ այն հեռավոր սեպտեմբերում...  
 Հյուրանոցի իմ պատուհանը նայում էր ուղիղ Ղազանեցոցին, որը երկինք միտված ճեմնակ հրեշտակ էր հիշեցնում: Թվում էր ուր որ է վեր կթևի...  
 Մտնում եմ ընդարձակ բակը, ապա՝ ծնկաչոք աղոթք մրմնջում վանքի կամարների տակ:  
 Եկեղեցին այսօր խոնարհվել է, սակայն չի «ծնկել»: Աշխարհահռչակ թավջութակահարը վանքի ավերակների մեջ համերգ էր տալիս, հրթիռների շառաչի տակ առաջին զույգն է պսակադրվում և այսպես շարունակ...  
 Այսքան ցավ ու դառնություն տեսած հողը, որերորդ անգամ ներծծվում է հերոս հայորդիների արյունով: Աշխարհի հայերը ոտքի են կանգնել աջակցելու անհավասար մարտ մղող, իր հայրենական պատերազմը պատվով առաջնորդող Հայրենիքին:  
 Կստահ եմ՝ շուտով միահամուռ կամքով ու քաջությամբ կհաղթենք թշնամուն, և կրկին կվերակառուցենք մեր ավերված քաղաքներն ու գյուղերը, դպրոցներն ու եկեղեցիները՝ ի հեճուկս արյունարբու թշնամու և ի փառս նահատակված մեր ՔԱԶ ՋԻՆՎՈՐԻ:  
 ՔԱԶԵՐԻ ՄԵՐՈՒՆԸ՝ ՔԱԶԵՐ ԵՆ: ՀԱՂԹԱՆԱԿԸ ՉԻ ՌԻՇՆԱՆԱՌԻ ՔԱՆՔ ՄԵՉ ԱԶԱԿԻՑ Է ԱՍՏՎԱՏ:  
**Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**



**ՔԱՌՅԱԿՆԵՐ**  
 Բարձր են լեռերն Արցախ աշխարհի, Բարձր են ու հպարտ արցախցու նման, Հանգիստ չի գտել այստեղ թշնամին, Չի գտնի անդորր, չի գտնի կայան:  
 \*\*\*  
 Այգաբաղից մայրամուտ, Մուր զիշերից լուսաբաց, Դու շողում ես իմ սրտում, Իմ հայրենի վեհ աշխարհ:  
 \*\*\*  
 Թիթեռի նման մի՛ ապրիր օրդ, Կզան ու կանցնեն օրերդ քահել, Չես էլ իմանա, ինչպես աննկատ, Եկան օրերդ աշնան, օրերդ անել:  
 \*\*\*  
 Ճամփաներ անցա այս մեծ աշխարհում Տեսա քաղաքներ փոքր ու մեծ, Ախ՝ ապրեցի քեզանից հեռու, Չիմացա կյանքիս ճամփան լոկ դո՛ւ ես...  
 \*\*\*  
 Հոգնել եմ կյանքի տարուբերումից, Փոթորկահույզ ալիքներից գոռ, Որոնք տարել են ինձ զագաթը սարի, ՌԻ ցած են նետել այնտեղից մի օր:  
 \*\*\*  
 Այս թիվը մանկուց ծանոթ էր ինձ, Թեպետ այնժամ արգելված էր այն, Ապրիլի և գարնան օրերն այս ջինջ, Սև վերք են թողել մեր սրտի վրա:  
 \*\*\*  
 Մարդն է աշխարհի նուշը, Սակայն, ցավոք, Շատերը դառնում են Աշխարհի փուշը:  
**ԴՈՒ ԻՍ ՀԱՅԱՍՏԱՆ**  
 Բարիքով առատ հող իմ հայրենի, Կյանք ես պարզել հազար հազարների, Երկինքը կապույտ, դաշտերդ կանաչ, Արևդ շռայլ, բերքդ քաղցրահամ:  
 Դու կյանքի աղբյուր՝ զուլալ ու խաղաղ, Դու ծով դաշտերի մի ցողիկ անբիծ, Գարնան ծաղկունքով բնության պսակ, Հավերժ իմ կարոտ, ծառազարդ երկիր:  
 Դու արմատ հնազույն Կովկասնոց ես եղել դեռ հին դարերից, Բայց դիմացել ես հազար դավերի Հազար հողմի դեմ՝ մնացել կանգուն:  
 Ցավը քո սրտում ապրել ես դարեր, Քեզ կործանել են, արել են ավեր, Բայց հառնել ես դու, կանգնել հպարտ, Հավատով ապրել, մնացել անպարտ:  
 Ապրել ես կյանքում անկում ու վերելք, Հասել փրկության քո դարին քսան, Այս մեծ աշխարհի մի փոքր հատված, Իմ հարազատ հող, ինձ ծնող աշխարհ:  
 Կյանքի ճամփեքին եղել ես միշտ Ե՛վ հողի մշակ, և զինվոր անպարտ, Հնձել ես արտդ դու սուրը ձեռքիդ, Ըմպել դառնություն և խինդ հավասար: Իմ հին Լաիրի, Դու իմ Հայաստան...  
**ՀԱՅՐԵՆԻԲ**  
 Պատմության դաժան դարերի երթում Քայլել ենք թողնելով հետքը մեր արյան, Քայլել ենք կորցնելով, քայլել գտնելով, Քայլել մահվան դեմ՝ հույս ու հավատով: Դարեր են եկել, դարեր են անցել, Միասին կրել ենք լուծը մեր բախտի, Արյուն ու արցունք իրար ենք խառնել, Քո մեծ պատմության էջերը գրել:  
**Հենրիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՆԶԵՑՈՑՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին թշնամու թիրախ դարձավ նաև Շուշիի Ղազանեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Այն խոնարհվեց, բայց չծնկեց: Պատերազմի 28-րդ օրը եկեղեցում պսակադրության արարողություն տեղի ունեցավ: Հովիկն ու Մարիամը երգվեցին շատ երեխաներ ունենալ ընկած հերոսների փոխարեն:  
 — Սա մեր ուղերձն է քաղաքակիրթ աշխարհին, սա մեր բողոքն է և պայքարը, — ասացին նորապսակները:  
 ... Եվ աշխարհում ո՞վ կարող է հաղթել այս ժողովրդին:

## ՄԵՆՔ ՔԵՉ ՀԵՏ ԵՆՔ ԱՐՑԱՍԻ

Ռոստոմի մարզի Սեմիկարակոբսկ քաղաքի հայ համայնքի ղեկավարը Սարգիս Սեդրակյանը հուզված պատմում է երկու հայ մանուկի եղբայրներ Գևորգի և Գոռի մասին: 10-12 տարեկան եղբայրներն իրենց փոքրիկ խնայողությունը՝ 12 500 ռուբլի, ուղարկել են հայ զինվորի օգնության ֆոնդին:  
 — Սա հազարավոր օրինակներից մեկն է. սփյուռքը մեծից-փոքր կանգնած է Հայրենիքի պաշտպանության ու Հաղթանակի Սուրբ գործի համար, — ասում է Սարգիսը և ցույց տալիս կտրոններ, ըստ որի փոքրիկ համայնքը 402 000 ռուբլի է փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Դրամահավաքը շարունակվում է:

## ԽՆԴԱՆՔ

Մեր ավագ եղբայր՝ արքա Ռուսաստան, Տարագիր հային տաքուկ ապաստան, Բարեհույս երկիր, անձայր ես ու մեծ Քո սիրտը, սակայն, քեզնից էլ է մեծ: Վաղուց ես եղել հային հարազատ Կողբիդ ապրել ենք հանգիստ ու ազատ, Միշտ եղել ես մեզ թիկունք, պահապան, Իսկ մենք քեզ հոգով պարտապան:  
 Քո գրկում ուրախ ապրում ենք, շնչում, Հայաստանի համար, սակայն, ներշնչում: Զսպաշապիկն է նեղում անավարտ, Անհանգիստ է նա ու անսաղավարտ: Դեռևս երեկ ՍՍՀՄ էինք, Բոլորս ունեինք մի սուրբ հայրենիք, Հիմա երկունս են, սակայն ես տրտում, Մեկը հոգուս մեջ, մյուսն՝ իմ սրտում:  
 Այս միտքը հիվանդ հանգիստ չի տալիս, Ճնշում է ներքուստ, ծվատում հոգիս, Ուզում եմ օգնել, հայրենի ք իմ հեզ, Բայց չեմ գտնում ելք, չգիտեմ՝ ինչպե՛ս: Կուզեի արծվի հզոր թևերով Ճակրեի այնտեղ՝ սար ու ձորերով, Ազգիս հոգնատանց զորկա ամենի, Ու արծվային ուժ հաղորդեի:  
 Մոված գայլերի ոհմակների պես Մտել են մեր հող, հոշոտում են մեզ, Պայքարի մեջ ենք, համառ, անդադար, Մեր գործն արդար է, նրանցը վատթար: Ե՛լ, ավագ եղբայր, է՛լ, Աստծո՛ւ ի սեր, Ե՛լ, թիկունք կանգնիր եղբորդ կրտսեր, Պետք է աշխարհով մեկ հրահանգել, Մարդկային հոգու մարտկոցն էլ հանգել:  
 Դու վստահ եղի ք մեր ամեն քարին, Քարն էլ է մեզ պես քեզ հավատարիմ, Մենք սիրում ենք քեզ, քեզնով ենք հպարտ, Սուրբ նվիրումով քեզ երախտապարտ:  
**Մեղա ԽԱՀԱՏԱՐՅԱՆ, Դոնի Ռոստով**